



# ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

05 մարտի, 2014թ. .ք. Երևան

## «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի իրագրեցման սեմինարը

2014 թվականի մարտի 5-ին Վանաձոր քաղաքում տեղի ունեցավ «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի իրագրեցման սեմինարը:

«Մենք շատ ուրախ ենք, որ պատիվ ենք ունեցել Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային այս դրամաշնորհը տրամադրել և հույս ունենք, որ այն մեծ ազդեցություն կունենա կոռուպցիայի դեմ պայքարի գործում», -ասաց Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության Համագործակցության բաժնի ղեկավարի տեղակալ Խոսե Մարիա Մեդինա Նավարրոն:

«Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանում շատ կարևոր փուլում է և այսօր կարիք կա համախմբել ինչպես իշխանությունների, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ջանքերը, որպեսզի հնարավոր լինի ոչ միայն պայքարել, այլ նաև հաղթահարել այս երևույթը», -ասաց ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կվճակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Միջոցառման շրջանակներում ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը ներկայացրեց ծրագիրը: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և ՋԼՄ-ների երկայացուցիչներ:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

**Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան** (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրագրել է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

**Ինֆորմացիայի ազատության կենտրոնը** (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

**Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել.**

**Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL <http://www.ayla.am>:**

**Կատարող՝ Նարինե Կարապետյան, Էլ.փոստ՝ [pr@ayla.am](mailto:pr@ayla.am):**



<p>Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010</p> <p>Հեռախոս: +37410 54 01 99 Հեռապատճե: +37410 58 02 99</p>	<p>Ինֆորմացիայի ազատության կենտրոն 2 Հասցե՝ Բուզանդի 1/3 Երևան, Հայաստան, 0010</p> <p>Հեռախոս: +37410 56 03 60 Հեռապատճե: +37410 56 03 60</p>	<p>Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից</p> <p>Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն Հեռախոս +37410 54 64 94 Հեռապատճե +37410 54 64 95</p>	<p>Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:</p> <p>Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային գանգալությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:</p>
---	---	---	--